

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. IV, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1980, 828 էջ:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» վերջին հատորի հրատարակումով ավարտվեց ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի պլանավորած ակադեմիական այս բառահատոր բացատրական բառարանի ստեղծման մեծ ու շնորհակալ գործը, որը պահանջեց շուրջ 25 տարվա տքնազան աշխատանք: 2717 ընդհանուր էջաքանակով քառահատորյակը պարունակում է 112 հազար բառ, դարձվածք, յուրահատուկ արտահայտություն: Այն շուրջ 50 հազար բառ ավելի է ընդգրկում, քան Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը»: Ակադեմիական նոր քառահատորյակը նշանակալից երևույթ է հայ բառարանագրության մեջ և իր արժանի տեղը կունենա մեր ժողովրդի հոգևոր մշակույթի գանձարանում:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» IV հատորը պարունակում է 42 հազար բառ, դարձվածք, յուրահատուկ արտահայտություն և (ինչպես նախորդ հատորները) արժեքավոր է մի շարք կողմերով: Այն տալիս է բառերի իմաստաբանական հարստությունը, իմաստային նրբերանգները, դրանք հաստատում հնդեվրոպային օրինակներով, որի շնորհիվ ոչ մի կասկած չի մնում տվյալ բառի ու նրա բացատրված իմաստի կամ իմաստների գոյության մասին: Օրինակ, պաճել բայի իմաստները բացատրված են 19 առանձին կետերով, ռվառ բառի իմաստային նրբերանգները՝ 10 կետերով: Բառերի բացատրման ու հաստատման այսպիսի եղանակը թույլ է տալիս հետևելու լեզվում բառերի իմաստների զարգացման ու փոփոխման ընթացքին, դրանց պատմությանը:

Գրախոսվող հատորն աչքի է ընկնում նոր բառերի ընդգրկմամբ. բավական է ասել, որ միայն Ռ տառի համար բերվում է շուրջ 350 բառ, իսկ Ս տառի համար՝ մոտ 2150 բառ (նշանակում է՝ նույնքան ու գեթ ավելի նոր իմաստներ), որոնք ընդհանրապես չկան Ստ. Մալխասյանցի բառարանի համապատասխան տառերի համար բերված բառացանկերում: Այդպիսի բառերից են՝ ռալիճաղորդավար, ռազմաեղակատային, ռազմատեխնիկական, ռեփինգործ, ռեփինգ, ռմբապատարան, սեփականագրելի, սիրիշյան, սիգալստ, սիգապատ, սիրագործով և այլն:

Այս հատորը ևս ուշադրավ է բառերի ուղիղ ու փոխաբերական նոր իմաստների, իմաստային նրբերանգների բացահայտման առումով: Կարելի է նոր իմաստների արձանագրում նշել հարյուրավոր բառերի համար, բայց բավարարվենք միայն երկուսի մասնանշումով: Օրինակ, վեռակոչել բայի համար բերված հետևյալ իմաստը՝ «2. Վկայաբերել: Վերակոչեց իր ընդունակությունները (ԴԴ)», իսկ տեղեկությունի բառի համար՝ «1. Խ տան գործերով զբաղվող՝ ռեկեմինդացիում շաշխատող կին», «3. Հիմնադրի կամ ուրիշի տան տնտեսական գործերը վարող կին: Պողոս էֆենտին... վարժարանին տնտեսն ու տնտեսուհին ալ բերել տված էր (ԾԾ)» իմաստները չկան Ստ. Մալխասյանցի հայտնի բառարանում:

Բառարանը զգալի տեղ է հատկացրել մեր գրական լեզվի արևմտահայ տարբերակից (հատկապես գեղարվեստական գրականությունից) և արևելահայ մամուլից քաղված բառերին: Արևմտահայ ստեղծագործողների երկերից վերցված օրինակներով են հաստատված՝ տպագրաճապեղ (Հ. Պարոնյան), տրիպանոյզ (Լ. Բաշլյան), ռոշնույրյուն (Դ. Վարուժան), օպորել (Երուսան) և այլ բառեր: Հաճախ այս կամ այն բառի բացատրված որևէ իմաստի համար բառարանը քաղվածք է բերում նաև արևմտահայ հնդեվրոպային ստեղծագործություններից: Միայն մամուլից բերված օրինակներով են հաստատված սիգ (ձկան տեսակ), սիգամարգ, տիտղոսացուցակ, տիտղոսաթերթ, ուղեպալա, ուղեպալուսակ, փառակալվել, օձավազգ, օձալուր, օզա-

¹ Տվյալները մեզ հաղորդել է ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի վարիչ Հ. Կոստանյանը:

⁴ Այս բառերի համար թեև ճիշտ սկզբունք է նշված (տե՛ս ԺՀԼԲԲ, հ. I, էջ VII), բայց քառարանագիրներն այդ սկզբունքից հետագալում շեղվել են:

լաշ, շալոթյուն, շեյքեմ, շեպել և այլն, որոնք դրական հայերենում ունեն իրենց համարժեքը: Սափրչառաց, ռափրչառուն բառերի համար բառարանը բնագրային օրինակ չի բերում. չի նշում բարբառային, հնացած, հազվադեպ լինելու մասին: Ուստի, ստացվում է, որ ռափրչառաց, ռափրչառուն բառերը գործածական են արդի գրական հայերենում:

Բնագրային օրինակներով հաստատված չեն՝ ա) հազվադեպ համարված բավական թվով բառեր. Կաղիկ, ռազմեղբի, փառակերտ, վրժածաբալ և այլն. բ) հազվադեպ շամարված բազմաթիվ բառեր. շնդել, շեփորաճառություն, սերնդափոխություն և այլն. գ) այս կամ այն բառի բացատրված որևէ իմաստը, այսպես՝ քառասունհինգ բառը բացատրված է 4 կետով, բայց բնագրային օրինակով հաստատված է միայն 3-րդ կետը, դ) բազմաթիվ դարձվածքներ. օրինակ՝ ոսկոր գլխարակի տակ բերված ոսկոր կրծող, ոսկորենքն աղալ և այլ դարձվածքներ հաստատված չեն համապատասխան նախադասություններով: Մինչդեռ Ստ. Մալխասյանցի բառարանը քննադատվել է հենց բնագրային օրինակներ գրեթե չբերելու համար: Վերը բերված բառերի համար նշենք աղբյուրներ. վարդիկ (ՊԴՏ, 30), ռազմեղբի (ՍԸԾ, 26), փառակերտ (ն. տ., 27), վրժածաբալ (ն. տ., 39), շեփորաճառություն (ԾԾ, 667), սերնդափոխություն (ԳԲ. 1. V, 1973):

Երբ բառի կամ նրա որևէ իմաստի համար հնարավոր է մայրենի աղբյուրից վկայություն բերել, նպատակահարմար չէ քառասունհինգ գրականությունից քաղվածք կատարել: Այդպես են ներկայացված քառաբալ, շեփորային, շրջագծել և այլ բառեր, այնինչ, ունենք՝ քառաբալ (ՍԸԾ, 16), շեփորային (Արվ., 1962, № 6, 25), շրջագծում են (ՀԶ, 11. V, 1976), հաստորում նշված է, որ շեղջակուտվել բայը շեղջակուտելի կրավորականն է, բայց բառարանը շեղջակուտել բառը չունի: Մի շարք բայերի դիմաց չի նշվել, թե ո՞ր սեռին են պատկանում (տե՛ս նախորդի, նախել, ներդաշնակվել, շվացնել և այլն): Շաղվեցնել բայը համարված է չեզոք սեռի՝ «շղմեցնել, շփոթեցնել» իմաստներով: Սակայն այն դեպքում, երբ լեզուն ունի շաղվել բայը և՛ ներգործական, և՛ չեզոք սեռի համար (տե՛ս էջ 60), դրանից -ց(ն)-ով կազմված բայը դարձյալ չեզոք լինել չէր կարող. այլ՝ ներգործական սեռի:

-Ց(ն)-ով կազմված բայերի սեռը բացարձակ գերակշռությամբ համարված է ներգործական (տե՛ս լուրացնել, նախագովաջացնել, ներկայացնել, շիջեցնել և այլն): Սակայն բառարանի որոշ հատվածներում -ց(ն)-ով կազմված բոլոր բայերի դիմաց նշված է պատճառական սեռ, որն ընդունելի չէ (տե՛ս անփականացնել, անփականեցնել, սիրահարեցնել, սիրեցնել, սիրուեցնել, սխալեցնել, սպիացնել, օլլացնել և այլն):

Այսպիսով, բառարանագիրները, եթե հավատարիմ մնային իրենց իսկ ձևակերպած տեսականերին՝ ճիշտ և ընդունելի սկզբունքներին, ապա նոր բառարանն ընդհանրապես, իսկ նրա չորրորդ հատորը մասնավորապես, ավելի կատարյալ կլիներ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆ—«Առողջապահություն»:

Արվ.—«Արվեստ»:

ԴԲ—«Դրական թերթ»:

ԴԴ—Դ. Դեմիրջյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1956:

ԴԴՄ—Դ. Դեմիրջյան, Մեսրոպ Մաշտոց, Երևան, 1953:

ԾԾ—Ծ. Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1962:

ՍԸ—«Միժնռակ»:

ՀԶ—«Հայերենի ձայն»:

ՊԴՏ—Պ. Դուրյան, Տաղեր, Երևան, 1963:

ՍԸԾ—Սիմոնյան, Ընտրի երկեր, Երևան, 1957:

ՍՀ—«Սովետական Հայաստան»:

ՎհԳՂ—Վ. Խելումյան, Դիրք լինելության, Երևան, 1966:

Ն. տ.—Նույն տեղում:

ԴԵՎՈՐԳ ԲԱՂԴԻՇՅԱՆ

Բանասիրական գիտությունների քննադատ

Յ. Լ. Բ. Պետրոսյան, Ստեփանոս Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» («Էլեզիկ և ոճի հարցեր», հ. 1, Երևան, 1960, էջ 402), է. Բ. Աղաջյան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Երևան, 1962, էջ 77: